ԱՐՄԱՎԻՐԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ*

Գ. Ա. ՏԻՐԱՑՅԱՆ

Արմավիրի հնագիտական սիստեմատիկ ուսումնասիրումը, որ ձեռնարկել է ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտը (1962—1969 թթ., ղեկ. Բ. Ն. Առաքելյան) տվել է մի շարք ուշագրավ արդյունքներ. բացվել է ուրարտական պարսպի եզրագիծը՝ շուրջ 500 մ երկարությամբ, ուրվագծվել են ուրարտական մի շարք շենքերի հատակագծերը, բացահայտվել է հին հայկական շերտը, որը բնորոշվում է հարուստ և ինքնատիպ խեցեղենով[1]։ 1970 թ. աշխատանքները կենտրոնացան բլրի արևմտյան լանջում և գագաթում։

Նախորդ տարիներին ամրոցի հյուսիս-արևմտյան մասում բացված մուտքի ներքին պարիսպը թեքվում էր դեպի հարավ և ընդհատվում հողի հաստ շերտի տակ։ Պարսպի բացման աշխատանքների շարունակումը պարզեց, որ այն ձգվում է նույն ուղղությամբ մոտ 25 մ, միանալով դեռևս պեղումների առաջին տարիներից հայտնի առանձին կանգնած որմնահեցի (կոնտրֆորսի) հետ։ Ներկա վիճակում, նորահայտ պարսպի հատվածը ունի շուրջ 40 մ երկարություն, մի անկյունային աշտարակ և 3 որմնահեց (1,10—1,20 մ դուրս ցցված, երկարությունը՝ 4,50—4,60 մ, հեռավորությունը իրարից՝ 6,80—6,90 մ)։

Արտաքին, արևմտյան պարսպից մոտ 30 մ հեռավորության վրա գտնըվող ամրոցի արևմտյան տեղամասը հյուսիսից հարավ հատող այս զուգահեռ պարսպի նպատակը, մանավանդ նրա բացման սկզբնական շրջանում, թվում էր անհասկանալի։ Այժմ, երբ նրա ծայրը զգալի չափով մոտեցել է ամրոցի հարավային սահմանին, պարզ է դառնում, որ բացվում է ամրոցը արևմուտքից եզրափակող մի նոր պարիսպ։

Ներքին պարսպի բացված մասը կանոնավոր դասավորված որմնահեցերով ուղիղ գիծ է կազմում, նմանվելով ամրոցի պարսպի մյուս բոլոր հայտնի հատվածներին։ Արտաքին պարիսպը, ինչպես մատնանշել է ճարտարապետ Կ. Ղաֆադարյանը, աչքի է ընկնում իր անկանոնությամբ. որմնահեցերը, որոնք, ի դեպ, ավելի մեծ են և աշտարակաձև, մի գծի վրա չեն գտնվում։ Հետևապես, բացառված չէ, որ գործ ունենք ժամանակագրականորեն տարբեր պարիսպների հետ։ Նոր բացվածը, ամրոցի արևմտյան առաջին պարիսպն է, որ կառուցվեց ամրոցի հիմնադիր Արգիշտի I-ի օրոք։ Արտաքին երկրորդ պարիսպը հետագայում է կառուցվել՝ ամրոցի տերիտորիան արևմուտքից ընդարձակելու

---

* *Նախնական հաղորդում 1970 թ. պեղումների մասին։*

[1] Б. Н. Аракелян, О некоторых результатах археологического изучения древнего Армавира. *(«Պատմա-բանասիրական հանդես», 1969, № 4, էջ 157—174)։*

(նախնական հաշվումներով՝ շուրջ 1/4 հեկտար) և նոր մուտք ստեղծելու եղանակով։ Հին և նոր պարիսպների միջև ընկած տարածության վրա կառուցվել են բազմաթիվ շենքեր կամ սենյակներ։ Երկու պարիսպների միջև արևմուտքից արևելք, իրարից հավասար հեռավորության վրա ձգվել են զուգահեռ հաստ պատեր, որոնցից չորսի հետքերը այս կամ այն չափով պահպանվել են։ Պեղումների ընթացքում պարզվեց, որ այդ պատերից մեկի հիմքերը միանում են նորահայտ պարսպի որմնահեցի քարե ներքնամասին։

Նկ. 1. Արմավիրի միջնաբերդի հատակագիծը։

Երկրորդ արտաքին պարսպի կառուցումը ամրոցի արևմտյան մասում կարելի է կապել Արգիշտիի հաջորդի՝ Սարդուր II-ի անվան հետ։ Արմավիրում և նրա շրջակայքում Սարդուրը թողել է բազմաթիվ արձանագրություններ, որոնցից երևում է, որ նա կառուցել է ոչ միայն տաճարներ և պաշտամունքային շենքեր, այլև զբաղվել է ամրոցաշինությամբ[2]։

Պեղումների հետևանքով մուտքի մոտ, ներքին պարսպի անկյունային մասում, ներսից բացվեցին երկու (5,50 մ×3,80 մ և 5,50 մ×3,60 մ չափերով) քառանկյունի սենյակներ, որոնք իրարից բաժանված են 1,50—1,60 մ հաստություն ունեցող պատով։ Արևմուտքից ու հյուսիսից դրանք հարում են պարսպի անկյունավոր մասին, իսկ հարավից ունեն ընդհանուր պատ։ Պատերի ներքնամասը անմշակ քարերից է շարված՝ 1,20—1,30 մ ընդհանուր բարձրությամբ։ Վերևի մասը շարված է չթրծված աղյուսներից, որոնց հետքերը երևում են արևմտյան պատի վրա։ Մյուս պատերի վերևի մասերը շատ են

---

[2] Г. А. Меликишвили, Урартские клинообразные надписи, М., 1960, № 166, 169, 170.

տուժել միջնադարյան շերտից (միջնադարյան պատերը, թոնիրները և նյութական մշակույթի այլ մնացորդներ նստած են ուրարտական պատերի վրա)։

Պարսպին կից, ներսից տեղադրված սենյակները ծառայել են կայազորին։

Նկ. 2. Ուրարտական խեցանոթների բեկորներ, կնիք և նետասլաք

Այդ սենյակներում, ինչպես նաև նորահայտ պարսպին հարող քառակուսիներում գտնված ուրարտական նյութը բավական բազմազան է։ Հանդիպում են ուրարտական խեցեղենին բնորոշ մեծ թվով փայլեցրած կարմիր կավանոթների, այդ թվում՝ սափորների բեկորներ (աղեղնաձև կանթ՝ դրսից երկարությամբ փոսվածքով, հիմքի մոտ փորագրված նշանով, ուսից դեպի վիզը անցումը նշանավորող ռելիեֆ նեղ գոտով մի բեկոր, հատակի մաս կլոր ոտքով՝ գուցե պնակի)։ Հանդիպում են պնակների կամ քրեղանների բեկորներ, ուղիղ կամ պրոֆիլավորված շրթերով, ինչպես նաև դրսից ուռուցիկ, ներսից գդալանման փոսիկներով հին արևելյան տիպի ֆիալայի բեկորներ։

Չփայլեցրած, դժգույն մակերեսով ուրարտական խեցեղենը ներկայացված է հաստիրան, լայն վզով անոթների և խորը, մեծ քրեղանների բեկորներով։ Մի փոքր բեկորի վրա պահպանվել է խաչաձև նշան։ Կավանոթների հետ

մեկտեղ գտնվել է նաև թերի բաղալտե պնակ։ Քարե նման ամանները լայն տարածում ունեին Ուրարտուում։ Սենյակներից մեկում գտնվել է կշռաքարի ձև ունեցող ունկով կնիք, որի մակերեսին փորագրված են առասպելական կենդանիների պատկերներ։ Ուրարտական երկու կնիք (մեկը կոնաձև, մյուսը կշռաքարաձև) պատահաբար գտնվել են Արմավիրում. դրանք ձեռք է բերել Ն. Մառը դեռևս անցյալ դարի վերջում[3]։

Մետաղյա իրերի շարքում պետք է հիշատակել բրոնզե պոչուկավոր նետասլաքը։ Արմավիրի հնագիտական արշավախմբի աշխատակից Ֆ. Տեր-Մարտիրոսյանի կարծիքով՝ այն ասորեստանյան տիպի է։

Հետուրարտական՝ վաղհայկական և հելլենիստական ժամանակաշրջանի շինարարական հետքերը դժվարությամբ են ի հայտ գալիս։

Միջին դարերում, ամրոցի ավելի խորը շերտերում կատարված ավերածությունները մի կողմից և ամրոցի մինչև օրս ուսումնասիրված տերիտորիայում գտնվող հետուրարտական շենքերի համեմատաբար համեստ բնույթը մյուս կողմից առայժմ հնարավորություն չեն ընձեռում վերականգնելու անտիկ շրջանի ճարտարապետական մնացորդների քիչ թե շատ ամբողջական պատկերը։ Դեռևս նախորդ տարիներին բլրի արևմտյան լանջում, ուրարտական շենքերի պահպանված մակարդակից վերև, բացահայտվեցին ավելի ուշ ժամանակի շինարարության հետքեր։ Այդպես, քառակուսիներից մեկի պատի կտրվածքում լավ նշմարվող փոքր գետաքարերից կազմված շերտը, որը կարող էր շինության կամ բակի հատակ ծառայած լինել, դիտվում էր մի շարք տեղերում, այդ թվում և արևմտյան մի պարսպից մյուսը ձգվող ուրարտական պատի քարե հիմքերի վրա։

Երկու իրար զուգահեռ, բայց տարբեր մակարդակի վրա կանգնած պատեր, որոնք իրենց մի շարք հատկանիշներով արմատապես տարբերվում են ուրարտականներից (մեկի լայնքը՝ 0,50 մ, մյուսինը՝ 1 մ, իսկ ուրարտական պատի լայնքը՝ 2,80 մ), նույնպես շարված են ուրարտական պատի քարե հիմքերից վերև։ Ուրարտական նույն պատի քարե ներքնամասի և նրա վրա տեղադրված հետուրարտական պատից վերև գտնվում է մի հոր, որը դատելով հատակի նյութերից հավանաբար թվագրում է հելլենիստական ժամանակաշրջանով։

Անկասկած, վերոհիշյալ մնացորդները թույլ չեն տալիս որոշակի պատկերացում կազմելու ամրոցի այս հատվածի ուրարտական ժամանակաշրջանին հաջորդող ճարտարապետական կերպարի մասին, բայց դրանք բավական են նման ճարտարապետության գոյության փաստը հաստատելու համար։ 1970 թ. ամրոցի նույն այս մասում հնարավոր եղավ ուրվագծել մի սենյակի քառանկյունի (6,60 մ × 4 մ) հատակագիծ։ Պատերի պահպանված վերջին շարքերը կազմված են անմշակ քարերից, հարթ երեսները դեպի դուրս։ Պատերի լայնությունը 0,70—0,80 մ է։

Սենյակի շերտագրական առանձնահատկությունն այն է, որ նրա հարավային նեղ պատը տեղադրված է ուրարտական պատի քարե լայն ներքնամասի վրա, որից բաժանված է մոտ 0,30 մ հաստությամբ հողի շերտով։ Սենյակի հարավ-արևելյան անկյունը, ինչպես նաև ուղղահայաց արևելյան պատի մի մասը նստած են ուրարտական պատի վրա։

---

[3] Б. А Куфтин, Урартский колумбарий у подошвы Арарата и Куро-Аракский энеолит, Тбилиси, 1944, рис. 33; 7, 8.

Այս շերտին հատուկ նյութական մշակույթը բնորոշվում է գլխավորապես խեցեղենով և մետաղե մի քանի առարկաներով։ Գտնված կավանոթների մի մասը նույնանում է նախորդ տարիներից հայտնի օրինակներին[4]։ Այդպիսիներից են ծորակավոր քթով, կարճ, լայն կանթով սափորի վերևի մասը՝ ծածկված մուգ-կարմիր ներկի թանձր, լավ փայլեցրած շերտով, ալաբաստրոնաձև անզարդ անոթի բեկորները, երեքնուկաձև շրթով միկանթանի սափորի վերևի մասը, պնակներ կամ մեծ թասեր պրոֆիլավորված շրթերով, ըմպանակ-ֆիալաների, կիսագնդաձև կամ կիսաձվաձև գավաթների, տափաշշերի, ճրագների, կճուճների՝ այդ թվում և խոհանոցային տիպի և կարասների բազմաթիվ բեկորներ։

Նոր ձևերից հիշատակության արժանի են գնդաձև, հաստապատ անոթը՝ օխրայի գույնի մակերեսով. ցածրանիստ, գոտեզարդ կճուճը՝ ուռուցիկ իրանով, տափակ հատակով, քիչ արտահայտված շրթով. օխրայի գույնի փոքր կճուճը՝ երեքնուկաձև շրթով. միկանթանի գունազարդ ասկոսը (ուռուցիկ, ցածրանիստ իրանով, տափակ, լայն հատակով, ծորակավոր քթով). փոքր, խորը քրեղանը՝ կոր պատերով, վերևի մասը չպահպանված, գունազարդ, փոքր, ուռուցիկ նրբախեցի անոթի բեկորները՝ հորիզոնական զուգահեռ ակոսներով, բաց շագանակագույն լավ փայլեցրած արտաքինով։

Հին Արմավիրի այս շերտի խեցանոթների համար բնորոշ են գունազարդ նմուշները։ 1970 թ. պեղումներն այս տեսակետից բացառություն չկազմեցին։ Գտնված բեկորները, ինչպես նաև ամբողջական անոթը պատված են կամ սև գույնի զարդերով կարմիր ֆոնի վրա, կամ բազմագույն զարդերով (սրճագույն, կարմիր, դեղին) օխրայի գույնի ֆոնի վրա։ Զարդերը երկրաչափական են ու բուսական։ Մի օրինակի վրա զարդը կենդանակերպ է։ Հատուկ ուշադրության է արժանի ասկոսը, որի երկու կողերը ծածկված են սև գույնի, սրածայր բարակ տերևներից կազմված երկարավուն ճյուղանման զարդերով։ Գունազարդման հետքեր են նշմարվում նաև կանթի վրա։ Հետաքրքրական է նաև քրեղանաձև փոքր, բայց խոր անոթը, որի կարմիր գույնի պատերը արտաքինից պատված են շղթայաձև, եռանկյունաձև և այլ, նախորդ տարիներին գտնված նմուշները հիշեցնող զարդերով։

Այս շերտերում գտնվել են ջնարակով ծածկված բեկորներ, որոնցից մեկը՝ լայնաբերան միկանթանի անոթի։ Ջնարակը բաց կապտավուն է, խամրած երանգի, կավը՝ դեղնավուն։ Հավանաբար գործ ունենք անտիկ ժամանակաշրջանի ջնարակի հետ, որի օրինակները հայտնի են Գառնիից, Արմավիրից, Հացավանից, Սիսիանից ու Արտաշատից։

Անտիկ շերտում գտնվեցին նաև կամարաձև զարդերով ապակու բեկորներ և կավե արձանիկի ներքնամաս, ծնկաչոք մարդու պատկերով՝ կլորավուն պատվանդանի վրա։ Կավե արձանիկներն անտիկ արվեստի ուրույն բնագավառն էին կազմում և թեպետ հաճախ պաշտամունքային նշանակություն ունեն, արտացոլում են նաև ժողովրդի կենցաղը։ Հայաստանի պեղավայրերից՝ Վաղարշապատից, Գառնիից, Արտաշատից հայտնի են տերակոտային արվեստի ուշագրավ օրինակներ։

---

[4] Г. А. Тирацян, Древнеармянская керамика из раскопок Армавира (опыт классификации и датировки). (*«Պատմա-բանասիրական հանդես», 1971, № 1, տախտակ I—III*).



3. Ուրարտական և հետուրարտական պատերի կտրվածքներ



Նկ. 4. Վաղ հայկական և հելլենիստական ժամանակաշրջանի նյութեր

Նկ. 5. Վաղ հայկական և հելլենիստական ժամանակաշրջանի նյութեր



Նկ. 6. Ուրարտական և հետուրարտական պատերի կտրվածքներ։



Նկ. 7. Գումաղարդ խեցեղենի նմուշներ։

Նկ. 8. Միջնադարյան կավանոթներ և մետաղյա իրեր։

Երկարավուն ակոսով բազալտե աղորիքը և նման գյուտերը վկայում են երկրագործության զարգացման մասին հին Արմավիրում և շրջապատում։

Մետաղյա իրերից պետք է հիշատակել երկաթե եռաթև ու քառանիստ պոչուկավոր նետասլաքները, որոնք ժամանակագրական տեսակետից լայն տարածում ունեն, բայց հանդիպում են հատկապես հելլենիստական ժամանակաշրջանի շերտերում[5]։ Գտնվեց նաև բրոնզե ոլորուն ապարանջանի մի բեկոր,

Նկ. 9. Միջնադարյան կարաս։

որն իր նմանն ունի Գեղադիրի ուշ աքեմենյան և վաղ հելլենիստական դամբարաններում[6]։

Ամրոցի վերևի շերտերը պատկանում են միջնադարյան ժամանակաշրջանին։ Դրանք հատկապես լավ են պահպանվել մուտքի ներսում, ուրարտական

5 Գ. Ա. Տիրացյան, նշվ. աշխ., էջ 226։

6 Ժ. Գ. Խաչատրյան, Հնագիտական հայտնագործություններ Գեղադիրում («Երևան հասարակական գիտությունների», 1966, № 1, տախտակ I)։

սենյակների վերևի հորիզոններում։ Այստեղ, ուրարտական պատի վրա քարե ներքնամասից մոտ 0,90 մ վերև դրված են եղել միջնադարյան կացարանների հիմնապատերը, մոտ 0,60 մ հաստությամբ, անկանոն շարված և նույն ժամանակաշրջանի թոնիրներ։ Միջնադարյան շինարարական մնացորդներ հանդիպում են նաև բլրի գագաթին տեղադրված շենքի արևմտյան մասում։ Տարբեր ժամանակներում բազմաթիվ վերակառուցումներ ապրած տաճարային այս շենքի նախնական ձևը պարզելու նպատակով հեռացվեց նրա արևմտյան կողմից կուտակված հողի զանգվածը, որի հետևանքով շենքին կից, հիմքերի մոտ գտնվող մշակված մեծ քարերի հետ մեկտեղ բացվեցին միջնադարյան կացարանների հետքեր՝ պատերի մնացորդներ, հատակի հատվածներ, բազմաթիվ թոնիրներ։ Նշված տեղամասերում և մյուս քառակուսիներում գտնված միջնադարյան իրերից ուշագրավ են դանակի բռնակը, տեգի ծայրը, դաշույնի բեկորը, որոնք երկաթից են։ Գտնված խեցեղենը բազմազան է. կան գլանաձև վզով միկանթանի սափորներ՝ զուգահեռ նեղ ակոսներից կազմված գոտիներով իրանի վրա. խոհանոցային տիպի կճուճների բեկորներ՝ բնորոշ կանթերով, խփեր. չնարակած ու ֆայանսե անոթների բեկորներ։ Որոշ հետաքրքրություն են ներկայացնում մեծ կարասի բեկորները։ Դրանք պատկանում են այն հաստափոր, լայնաբերան գինու կարասների շարքին, որոնք սովորաբար դրոշմազարդ են և թվագրվում են XI—XIII դդ.[7]։ Արմավիրում գտնված կարասը չորս կանթ ունի։ Շրթի ներքևի մասը, ինչպես նաև իրանը, զարդարված են ռելիեֆ գծերով, ատամնավոր և այլ զարդարուն գոտիներով։ Անոթի իրանը և վիզը ծածկված է կարմիր ներկով, որը քսված է համատարած հատվածներով կամ ուղղահայաց ընդհատվող շերտերով։

Արմավիրի պեղումները շարունակվում են։ Պետք է հուսալ, որ պեղումները նորանոր տվյալներով կհարստացնեն մեր գիտելիքները Հայաստանի հռչակավոր հնավայրերից մեկի մասին։

РАСКОПКИ АРМАВИРА

Г. А. ТИРАЦЯН

Резюме

Археологические исследования цитадели урартского города Аргиштихинили и столицы древней Армении Армавира, начатые в 1962 г., успешно продолжаются и по сей день.

В ходе раскопок 1970 г. были раскрыты западная оборонительная стена первоначальной урартской крепости, а также ряд помещений, археологический материал которых характеризуется краснолощеной керамикой, металлическими предметами и печатью урартского времени.

Были зафиксированы остатки зданий послеурартского времени, уровень залегания которых позволяет отнести их к ахеменидскому или, что вернее, к эллинистическому времени. Засвидетельствован и средневековый слой.

7 Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952, էջ 186։